

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 2

«Գավառի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի կարիքների համար՝ ավիասպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի «ԳՊՀ-ԲԸԱՀԾՁԲ-16/09» ծածկագրով գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Գավառ

22 հուլիսի 2016թ.

Սույն թվականի հուլիսի 22-ին ժամը 12:00-ին «Գավառի պետական համալսարան» ՊՈԱԿ-ում՝ ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1 հասցեում, տեղի ունեցավ համալսարանի կարիքների համար ավիասպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի «ԳՊՀ-ԲԸԱՀԾՁԲ-16/09» ծածկագրով գնային առաջարկների բացման հանձնաժողովի նիստ:

Նիստին մասնակցում էին հանձնաժողովի նախագահ Ռ. Խ. Հակոբյանը, հանձնաժողովի անդամներ՝ Գ. Գ. Մուրադյանը, Մ. Հ. Հովհաննիսյանը: Հանձնաժողովի քարտուղարը զեկուցեց գրանցամատյանի գրառումների մասին, ըստ որի հայտ պարունակող ծրար է ներկայացրել «Արմենիան Ադվենտուրես» ՍՊԸ-ն (ք. Երևան, Թբիլիսյան խճուղի 13/3) կազմակերպությունը:

Հանձնաժողովը գնահատեց.

- 1) «Արմենիան Ադվենտուրես» ՍՊԸ-ի հայտ պարունակող ծրարը մասնակցի կողմից կազմվելու ներկայացվել է սահմանված կարգով և պարունակում է հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող՝
 - առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգին մասնակցելու դիմում,
 - հայտարարություն՝ մասնագիտական փորձառության մասին,
 - հայտարարություն՝ ֆինանսական միջոցների մասին,
 - հայտարարություն՝ տեխնիկական միջոցներ մասին,
 - հայտարարություն՝ աշխատանքային ռեսուրսների մասին,
 - գնի առաջարկ 1, 2 չափաբաժինների համար,
 - մասնակցության հայտի ապահովում՝ տուժանքի մասին համաձայնագրի ձևով:Ծրարում առկա էր մեկ բնօրինակ, երկու պատճեն, յուրաքանչյուրը՝ ութ էջից:

Գնային առաջարկների համադրում ՀՀ դրամով, առանց ԱԱՀ-ի՝

Չափաբաժինը	Գնման առարկայի անվանումը	«Արմենիան Ադվենտուրես» ՍՊԸ
1	Ավիատոմսեր էկոնոմ կարգի՝ Երևան – Աթենք – Սալոնիկի – Աթենք – Երևան	1.745.851 /մեկ միլիոն յոթ հարյուր քառասունհինգ հազար ութ հարյուր հիսունմեկ/
2	Ավիատոմսեր էկոնոմ կարգի՝ Երևան – Կիև – Քիշինև – Կիև – Երևան	869.413 /ութ հարյուր վաթսունինը հազար չորս հարյուր տասներեք/

2) Մասնակցի հետ բանակցություններ չեն վարվել:

3) Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ կետի 2-րդ ենթակետի և ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 74 կետի պահանջներով՝ հանձնաժողովը

որոշեց՝

- ✓ Առաջին տեղ զբաղեցրած և ընտրված մասնակից ճանաչել «Արմենիան Ադվենտուրես» ՍՊԸ-ին:
- ✓ «Արմենիան Ադվենտուրես» ՍՊԸ-ին առաջարկել հաստատել պայմանագրի նախագիծը և ներկայացնել պայմանագրի ապահովում:
- ✓ Սույն արձանագրությունը հրապարակել պաշտոնական տեղեկագրում:
- ✓ Հանձնաժողովի հաջորդ նիստը գումարել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից պայմանագրի նախագծի հաստատումից և պայմանագրի ապահովում ներկայացնելուց հետո:

հանձնաժողովի նախագահ՝

Ռ. Խ. Հակոբյան

հանձնաժողովի անդամ՝

Գ. Գ. Մուրադյան

հանձնաժողովի անդամ՝

Մ. Հ. Հովհաննիսյան

հանձնաժողովի քարտուղար՝

Ս. Բ. Ղարաբաղյան